



ԷՋԵՐ ՀԱՅ ԵԿԵՆԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմական հայ երաժշտության ոսկե-դարը եթե չի զուգահեռվում գրականության (5-րդ դար), ապա զուգահեռվում է մեր ճարտարապետության պատմության ոսկե-դարին (7-րդ դար):

Ս. Հովհաննիսյանի վանքի շինարար Կոմի-տաս Աղցեցի, Գայանի վանքի՝ Եզր Փա-ռաճակերտցի և հռչակավոր Զվարթնոցի կառուցողը՝ Ներսես Տայեցի կաթողիկոսնե-րը իրենց գործերով հայտնի դեմքեր են հանդիսանում նաև մեր վաղ միջնադարի եկեղեցական երաժշտության պատմության մեջ:

7-ից մինչև 11-րդ դարը (ներառյալ) հայ եկեղեցական երաժշտության մեջ հանդես են գալիս մի շարք նշանավոր անձնավոր-ություններ թե եղած եղանակները գտե-լու, կարգավորելու մեջ և թե իրենց նորա-նոր ստեղծագործություններով հարստաց-նելու մեր երաժշտական գրականությունը:

Այս շրջանում է, որ իսկապես ծնունդ են առնում շարականները, մանր ասմունքնե-րը և հասնում իրենց զարգացման: Թեև մեր բանասիրության մեջ ընդունված է կար-ծել, որ շարականներից մի քանիսը պատ-կանում են 5-րդ դարի հեղինակներին (Սահակ, Մեսրոպ, Խորենացի) և այդ ա-նուններով էլ տեղ են գտել շարակնոցների մեջ, բայց դրանք, մեր կարծիքով, ենթա-դրական են և խնդրական: Ի՞նչ են շարա-կանները*):

*) Շարական բառի շար տեսակ մեկնումը ըստ հայ և օտար լեզվաբանների և բանասերների.

Ա. «Շարք ակնաց» այսինքն ակնբիշ շարք, Պե-տերման, Հին Հայկազ. բառարան: Մեթոմ. — ո-րովհետև բարդության մեջ կդառնար շար կամ ակ-նաշար:

Բ. Արարական շէր (երգ) բառից. Ն. Հայկազյան բառարան, էմբն:

Մեթոմ. — չէր չէր կարող շար դառնալ. ապա կրոնական մի բառ չէր կարող առաջանալ արարենե-

«Այս բառով հասկանում էին յուրաքան-չյուր տոնի հատկացված ինն հոգևոր երգե-րի մի շարք, որոնք մի ամբողջություն էին կազմում — կարգում ենք Աճառյանի «Ար-մատական բառարանի» մեջ, — հնագույն ժամանակներում ամեն տոնի համար կա-լին զանազան հոգևոր երգեր: Ը. դարուն հունաց մեջ, և նրանց օրինակով նաև հա-յոց մեջ, սովորություն դարձավ միևնույն տոնի պատկանող հոգևոր երգերից ընտրե-լով կամ, եթե պակասներ կային, լրացնե-լով կազմել ինն երգերի մի շարք: Շարքի այդ մասերն էին՝ Օրհնություն, Հարց, Գործք, Մեծացուցե, Ողորմեա, Տէր յերկ-նից, Մանկունք, Ճաշու, Համբարձի: Իսկ բոլորի ամբողջությունը կոչվում էր կանոն կամ կարգ, երբեմն նաև սաբ: Օրին.՝ Կարգ Մեհդյան, Կարգ Ավագ ջաբաբուն, Կարգ Ապաշխարոքյան: Ըստ Սահակ վ. Ամատու-նու շարական բառը առաջին անգամ պա-տահում է ԺԱ դարում: Շարականների ժո-ղովածուն կոչվում էր Շարակնոց կամ ուղ-ղակի Շարական»:

«Շարականի եղանակները տասն են», գրում է Կոմիտաս վարդապետը, «ուրթ ձայն և երկու ստեղի (ուրթ ձայնը ծագել է ուրթ կանոն սաղմոսներից), այնինչ հոգևոր եր-գերը, տաղերը, գանձերը, ավետիսները բազմեղանակ են և այնքան բազմատեսակ, որ կարիք է զգացվել դոցա միմյանց հետ շփոթելու համար զատ-զատ անուն տալ: Շարականների գլխավոր եղանակների և նոցա ստորաբաժանումների ընդհանուր թիվն է քառասուն, իսկ մյուս հոգևոր եր-գերին՝ հարյուր հիսուններկու: Շարակա-

րից. Ն. Մառ:

Գ. Ասորական շարք բառից. «հեկում, հակում, Երգ». Մառ:

Դ. Շարք բառից «ական» անցնելով Արեղյան, Ա-ճառյան:

նի եղանակները ըստ էության անփոփոխ են հասել մեզ»:

Շարականագիտությանը զբաղվող հայտնի բանասերները աչքի առաջ են ունեցել ավելի շատ տեքստերը, քան եղանակները և եթե տեքստի, նրա լեզվի, տաղաչափության և գրական արժեքավորման մասին կարելի է որոշ եզրակացությունների հասնել, ապա մեր կարծիքով, նույնը չի կարելի անել եղանակների վերաբերյալ, մինչև որ շվեդականին երաժշտական խազերը:

Մեր շարականները թարգմանված են ամբողջությամբ կամ իրենց մի մասով՝ ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն և լատիներեն:

Որոշք են մեր նշանավոր երաժիշտները միջնադարում:

Կոմիտաս կաթողիկոս (615—628). շինարար, բանաստեղծ և երաժիշտ: «Ուսումնական», ժամանակի մտավոր շարժման պարագլուխ, հիմնադիր Արշարունյաց վանքի և Շիրակի դպրեվանքի դպրոցների և բարեկարգիչ Սյունյաց հոշակավոր վարդապետանոցի», գրում է Օրմանյանը («Ազգապատում» Ա. 791): Նրան է պատկանում Հովհաննիսյան կույսերին նվիրված սքանչելի շարականի տեքստը և թե եղանակը: Բանաստեղծությունը գրված է հայկական տաղաչափությամբ 12 վանկյան տողերով, կանոնավոր հաստվածներով և շեշտերով:

Ահա մի քանի տող.

...Թուլացան կոտովիք հաստածիք
աղեղանց,

նւ տրկար կանայքըն վառեցան զինու,
Թագաւորն պերճացեալ զօրութեամբ
և փառօք,

Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր,
Ի վերա միմիոյ պատուական մարգարտի.
Խաղացին ցնծալով ախնայն

հեթանոսք.

Արեւմուտք յարեւիս ընթացեալ հասին,
Քարողել յայտնապես զքնաղ
տեսութիւն:

Գեղարվեստորեն և խորությամբ այսպիսի բանաստեղծության եղանակն էլ տեքստի բովանդակության լիովին ներդաշնակ եղանակավորում է տվել հեղինակը, որ և դարձել է մեր շարականներից ամենից ավելի սիրվածներից մեկը և Հովհաննիսյանց տոնին երգվել դարերով մինչև մեր ժամանակը:

«Կոմիտասի «Անձինքը» առաջինն է, որ

պատմական ստուգությամբ իր հեղինակի անունը կրկրն: Այդ շարականը հայկական հին լատին տաղասացության տիպարն է, բառերու և ոճերու ձևությամբը ընտիր հայկաբանության օրինակ է, բանաստեղծության արվեստի գերազանցությամբ նշանավոր է, պատմական հիշատակաց անխաղախ հետևող է և եկեղեցական և հոգևոր օծությամբը անզուգական քերթված մըն է» (Օրմանյան):

«Անձինք եվիդյալք» 36 տուն է, հայկական այբուբենի սկզբնատառերով, դրահամար էլ նրանից հետո այդ տեսակի գրված շարականները ընդհանրապես կոչվում էին «Անձինք»:

Եզր կաթողիկոս (630—641). շինարար և երաժիշտ, Հովհաննես Իմաստասերից (8-րդ դար) առնելով Ջարբանյանը գրում է. «Եզրը եկեղեցական ուրիշ այլ և այլ բարեկարգություններ ալ ըրած է, մասնավորաբար ժամակարգության և հասարակաց աղոթից մեջ»: Նույն աղբյուրից առնելով շարունակում է, որ այս կաթողիկոսին է պատկանում «Արևագալի կարգը»: Անշուշտ, խոսքը վերաբերում է այս շարականի թե տեքստին և թե երաժշտության: Եկեղեցու արարողությունը բաժանված էր հետևյալ ժամերի.

- ա. Գիշերային ժամ,
- բ. Առավոտյան,
- գ. Արևագալի ժամ,
- դ. Երրորդ կամ ճաշու ժամ,
- ե. Նրեկոյան ժամ,
- զ. Խաղաղական ժամ,
- է. Հանգստյան ժամ:

Ներսես Գ. կաթողիկոս (641—661). նշանավոր շինարար (Ներսես Շինող) և բարեկարգիչ եկեղեցական եղանակների: Վարդան պատմիչից նյութ առնելով, Օրմանյանը գրում է.

«Անգամ մը Ներսես Վարդապետի տոնին առթիվ կգտնվի Բագավանի եկեղեցին, որ է Բագրեվանդա Սուրբ Հովհաննեսը, աշխարհածողով տոնախմբությունը կատարելու: Երբ որ Հարցի շարականին կարգը կուգա, մեկ դասին դասապետը հարց մը կսկսի, զոր մյուս դասը չի կրնար կրկնիլ, և այսպես ութը Հարց փոխեցին և ոչ կարացին առնուլ միմյանց (Վարդ. 69): Անտեղություն պատճառը այն է, որ մինչև այն տեսն երգերը պարտավորիչ նույնությամբ ենթակա չէին և երաժիշտներ ազատություն ունեին նորանոր շարականներ կազմել և

եղանակավորել և համաձայնեցնել եկեղեցու մեջ երգել, որ տեսակ մը ճոխություն կըրնար նկատվիլ: Սակայն այդ ազատությունը մինչև զեղծում հասած էր և անտեղի մրցումներ ու նորությունաց պայքարներ սկսեան էին տարածվիլ»:

Ներսեսը այդ գործը կանոնավորելու համար ժողովի հավանությամբ հռամայում է քննել զարժանն և զայն միայն ուսանելիս կայա ընտրության գործը հանձնում և իսկ այս ընտրության գործը հանձնում և Շիրակի Դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Ճոն վարդապետին, որը իր հմտությամբ վայելում էր մեծ հարգանք և հեղինակություն: Շարականների այդ ընտրությունը կոչվում է ճոնընտիր և հաստատվում կաթողիկոսի կողմից և կարգադրվում, որ «յամենայն եկեղեցիս ամենայն օր մի պաշտոն լիցի», այսինքն բոլոր եկեղեցիներում միևնույն օրը միևնույն շարականները նրգեն:

Նույն 7-րդ դարում վաղ միջնադարի հայ եկեղեցական երաժշտության մեջ հայտնի են դառնում դարձյալ երկու անձնավորություն՝ Սահակ Առաքիտրեցի կաթողիկոսը (677—703) և նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացին:

Առաջինին են պատկանում «Էջմիածինն ի հօրե» և Ս. Խաչին նվիրած մի քանի շարականներ, նաև «Կանոն Շողակաթի» շարականը: Երկրորդին են վերագրում Մեծի Հարության, Վարդավառի, Մարգարեից և Պենտեկոստեի շարականները:

8-րդ դարում հայ եկեղեցական երաժշտության մեջ իրենց բաժինն ունեն երկու նշանավոր անձնավորություններ, Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը և Հովհանն Օձնեցի հայրապետը (717—728):

Առաջինը, Օրբելյան պատմիչի վկայությամբ, հորինել է շարականներ, կցորդներ, տաղեր, օրհնություններ, «Արար և ճառս բազումս, բաժանեաց և զուրկ ձայնս և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնությունս, երգեաց և կցորդս քաղցրահամս»: Սյունեցուն են պատկանում «Ավագ օրհնությունաց» ընտիր շարականները, բացի Վառձայնից, որի հեղինակը Շնորհալին է: «Խաչի շարականաց կարգին մեջ», ասում է Զարբանալյանը, «արբութիւն սրբոց վսեմ եւ իմաստալից երգը... Սյունեցունք քերթողական հանձարին արքայսիք է» (Հայ. դպր. 476):

Այս, 8-րդ դարում երեացել են նաև Էրկու կին երաժիշտ-երգահաններ, առաջին՝ Սահակարուստի մասին, որ քույրն էր

Ստեփաննոս Սյունեցու, Օրբելյան պատմիչը հիշատակում է այսպես. «Սա յոյժ հրմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ վարդապետի նստեալ ուսուցանէր զբազումս: Եւ արար կցորդս և մեղեդիս քաղցրեղազունակս, յորոց մին Սրբունի Մարիամ, որ իր անուամբ է յօրինար» (Լու):

Երկրորդը՝ Խոսրովիդուխտ, քույրն էր Վահան Գողթնեցու, որի նահատակության վրա հորինել է «Զարմանալիք է ինձ» հինգ տուն սրտառու շարականը:

9-րդ դարը հայ եկեղեցական երաժշտության համար ամուլ է մնացել: Թերևս արժան է հիշել միայն մեր եկեղեցու ծիսաբանի կարգավորումը Մաշտոց կաթողիկոսի ձեռքով, որի անունով և կոչվել է:

10-րդ դարում ծնվում է բովանդակ հայ բանաստեղծության շողշողուն աստղը՝ Գրիգոր Նարեկացին, որը սակայն հոգեւորական լինելով հանդերձ եկեղեցական չնկատվեց: Նրա աղոթքները, տաղերը, գանձերը, ոչ ժամերգության և ոչ շարականների մեջ են մտել, այլ դարձել են անհատական ընթերցանության ամենասիրված ստեղծագործություններ: Այս դարում անվանի երաժիշտներ են հիշվում Արշարունյանց գավառում Կամբջաձորի մենաստանի վանահայր Սամուելը, որը Ասողիկի վկայությամբ, եղել է «բազմաշնորհ ի գիտութիւնս գրոց սրբոց, յերգս երաժշտութեանց» (Գ. է.):

Այս Սամուելն է համարվում «Տոնապատճառ» գրքի հեղինակը կամ խմբագրողը:

Եղել է և վարդապետ Խաչիկ, «որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց», ասում է Մատթեոս Ուռհայեցին (Վաղարշապատ, էջ 244):

11-րդ դարում հայ միջնադարի կուլտուրական կյանքում քաջածանոթ Գրիգոր Պահլավունի իշխանը՝ Մագիստրոսը գրել է. «Զորս ըստ պատկերի», խաչի Ե. օրվան «Ողորմեա»-ն (Խաչկանց, էջ 54):

Մատթ. Ուռհայեցին հիշում է Անիում Սարգիս կաթողիկոսի «գրան եպիսկոպոս» Թորոսին «զմեծ երաժիշտն ձայնաւորաց, որ մականուն ասի Ալախօսիկ» (215): Նույն դարում Սանահնի վանքում ծաղկած են եղել «ճոնտորական և երաժշտական» գիտությունները. այդ մասին իր 61-րդ թղթում հայտնում է Գրիգոր Մագիստրոսը, իսկ թե որտեղ է ապրել նույն ժամանակում անվանի Դանիել երաժիշտը, որի հետ թղթակցել է ինքը Մագիստրոսը, հայտնի չէ:

Միջին շրջան (12—15-րդ դարեր):

Եթե 12-րդ դարը հայ գրականության համար կոչվում է արժաքի դար, ապա մեր երաժշտության համար նույնն է եղել, եթե ոչ ավելին: Այս դարում են իրենց ըսկիզբն առնում խազգրքերը, խմբագրված մանր ամուսնները, այս դարից են երաժշտական դպրոցներ հիմնվում Կիլիկիայում: Երգ-երաժշտության արվեստը հոգեվոր, եկեղեցականի հետ զարգանում է և իր տարածումը գտնում ժողովրդական-աշխարհիկ շրջաններում:

Մենք խոսենք եկեղեցականի մասին: 12-րդ դարի և առհասարակ ամբողջ այդ ժամանակաշրջանի ամենանշանավոր դեմքն է Ներսես Կլայեցին կամ Շնորհալիս (կաթողիկոս 1166—1173), բանաստեղծ, երաժիշտ, հեռուոր և բացուռիկ անձնավորություններից մեկը: Մեր բանասերները ներքան անվանում են 12-րդ դարի Սահակ Պարթև:

Շնորհալիս հեղինակ է մի մեծ շարք շարականների, տաղերի, հարցերի, երգերի և դանձերի թե տեքստերի և թե եղանակավորմանը: Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր Տաթևացին անուն-անուն թվում են այդ երկասիրությունները, որոնց հատուկ ուսումնասիրությամբ զբաղվելը պատկանում է շարականագիտության: Մենք այստեղ հիշատակենք միայն այն մի քանի ամենահայտնի շարականները, որոնք իրենց բանաստեղծական խորությամբ, արվեստով և երաժշտությամբ զարդ են կազմում եկեղեցական երաժշտության: Այդպիսիներից են Ավագ շաբթում երգվող «Պարզեառու»-ն, Վարդանանց տոնի երգվող «Նորահաւաք»-ը, Չարշարանքի գիշերը, մթության մեջ երգվող «Ով սփանջիլ»-ն, հուղարկավորությունների ժամանակ երգվող «Աշխարհ ամենայն»-ը, Վերջապես Շնորհալուն են հանրաժանութ «Առաւօտ լուսոյ»-ն, «Այսօր անճառ»-ը և շատ ուրիշ ժողովրդականությունն ստացած շարականներ և տաղեր:

Ներսես Կլայեցու՝ եկեղեցական երաժշտության այսքան հարուստ ժառանգություն թողնելու հետեանքով ժամերգությունից հետո զհետք դարձնելիս սաղմոսերգությունները և նրանց տեղը բռնեցին երաժշտական բարձրորակ երկասիրություններ:

Կարևոր է նշել այստեղ այն, որ Ներսեսը կողմնակից էր հայ երաժշտության արևելյան դպրոցին, կամենում էր վերականգնել հինը, ավելի հարազատը: Կիրակոս Գանձակեցին ասում է. «զի էր նա այր

բանաւոր, բազում ինչ կարգեաց յեկեղեցիքաղցր եղանակաւ խոսարկային ոճով շարականս և մեղեդիս և տաղս ոտանաւորս»: Բացի այդ, նա հատուկ մարդիկ է ուղարկել արևելյան Հայաստան, Մաքենոցաց և Թեղեկաց վանքերը (ծաղկած 7-րդ դարում), որ այնտեղից բերեն հայ եկեղեցական հին եղանակները:

Շնորհալուց հետո շարականների հեղինակներ հանդիսանում են Կիլիկիայում՝ Ներսես Լամբրոնացին և Հակոբ Կլայեցին, իսկ բուն Հայաստանում՝ Հովհաննես սարկավագ վարդապետը և Խաչատուր Տարոնեցին: Սա գրել է մի շարք շարականներ, որոնց գլուխ գործոցը համարվում է «Թորհուրդ խորին»-ը, որ երգվում է պատարագիչ քահանայի զգեստավորման ժամանակ:

Կիլիկիայում ինչպես ժողովման ամենաբարձր աստիճանին հասավ հայ մանրասկարչությունը, այնպես էլ հայ եկեղեցական երաժշտությունը: Դրազարկի, Արքայակաղնիի և Սկիւլոյի վանքերը եղել են նշանավոր երաժշտագետների գործունեության գլխավոր վայրեր իրենց դպրոցներով: Բազմաշխատ Ղևոնդ Ալիշանը իր «Միասական» աշխատության մեջ մի առ մի հիշատակում է այն երաժշտագետներին, որոնց անունները և գործերը ծանոթ են եղել իրեն իր պրպտումներից:

«Արվեստ և հմտություն սոցա որ է երաժշտություն, սեփական իմն շնորհ է դպրությանց հայոց Կիլիկիո, արժանի հիշատակության», — գրում է հեղինակը և թվում հետևյալ երաժշտագետներին:

«Պատվելին Ներսես, որդի Լևոն Բ. Թագավորի:

«Ավագ և Թորոս հուշակալ երիցունք: Հակոբ երեց և եղբայրը՝ Հովհաննես Դրազարկուն:

«Թորոս Թութրանց՝ Ավագերեցն արքունեաց և երբեմն դեսպան դնացեալ յԱնգղիա»: Սա կոչվում է հանճարեղ և իմաստուն երաժիշտ:

Սիմեոն դարապետ Դրազարկի և Սիմեոն փիլիսոփա Արփայակաղնիի: Սրանց հետ հիշվում է «միանգամայն և երիցագոյն Հովսեփ երաժշտապետ Դրազարկի*»), ընդ այն

* Այս Հովսեփ «Երեւելի երաժշտապետ»-ունի մի տեսություն երաժշտության մասին, որ գտնվում է Վենետիկի Մխիթարյանների զբաղաբանում, Հովհաննես զրջի կողմից 1924 թվին զբված տաղարանում:

ժամանակս էր», վերջացնում է Ալիշանը, «պատուական վարժապետն և երաժիշտն և առաջին քարտուղարն Սսոյ Գրիգոր մականունանեալն խոլն, որ ասեն թե մոմ դնէր յականջն, առ ի չսել բանս աշխարհականս, վասն այն կոչեցեալ խոլ, որ եբարձ աւելորդն և զպական լցոյց զՇարականին, որ նոյն օրինակքն կոչին խկցի, զոր ստուգեալ է նորա» (Սիս. 517):

14-րդ դարից արդեն վերջ է առնում նոր շարականներ գրել և եղանակավորելը, սակայն շարունակում են և ավելի զարգանում հոգևոր տաղերը, որոնցից շատ քերն են ընդունվում եկեղեցում, այլ երգվում են ընտանեկան համախմբումների ժամանակ:

Այստեղ մի անգամ ընդմիջտ ուզում ենք պարզել մի խնդիր: Միայն է մեր միջնա-

դարի տաղերգուներին կամ, ավելի ճիշտ, տաղասացներին՝ ինչպես Ֆրիկ, Կոստ. Երզնկացի, Թլկուրացի, Գր. Աղթամարցի և այլն՝ համարել երաժիշտներ. նրանց տաղերը չեն երգվել, այլ ընթերցվել են: Երաժիշտ տաղասացներից հայտնի են Հովհ. Երզնկացի, Կոստանդին Արևելցի, Գրիգոր Մերենց: Խաչին նվիրված տաղերից ամենահայտնին և գեղեցիկը դեռ մինչև անցյալ դարի վերջերը երգվող «Հաւիկ մի պայծառ» տաղն է՝

«Հաւիկ մի պայծառ տեսի անման

Ի յայն խաչափայտին վերա անման.

Անմանիդ ո՞վ նման, դու նման...»:

Ուշ միջնադարի մասին մի ուրիշ անգամ:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

